ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2020 թվականի հուլիսի 24-ից 25-ը

Արցախի Հանրապետություն (ք. Ստեփանակերտ) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Էդվարդ Հովհաննիսյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Արցախի Հանրապետություն, ք. Ստեփանակերտ, հուլիսի 24-ից 25-ը

4. Հրավիրող կողմը՝

Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Երկկողմ հանդիպումներ իրականացնելու և համատեղ հետաքրքրություն ներկայացնող հարցեր քննարկելու նպատակով:

6. Քննարկված թեմաները

Այցի ընթացքում քննարկվել են Հայաստանի և Արցախի հարկային և մաքսային ծառայությունների փոխգործակցությունը համակարգելուն, առկա խնդիրների լուծմանը, հարկային և մաքսային օրենսդրության միասնական կիրառումը ապահովելուն ուղղված մի շարք հարցեր:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Կայացել է հանդիպում Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի հետ, որի ընթացքում քննարկվել է համատեղ հետաքրքրություն ներկայացնող հարցերի լայն շրջանակ, որոնք վերաբերել են Հայաստանի և Արցախի պետական եկամուտների կոմիտեների միջև համագործակցության զարգացման հեռանկարին և իրականացվող ծրագրերի առաջնահերթություններին:

Քննարկվել են Հայաստանի և Արցախի հարկային և մաքսային ծառայությունների արդիականացման ծրագրերը, ինչպես նաև ներկայիս մարտահրավերները հաղթահարելու ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման ընթացքում ընդգծվեց այն փաստը, որ Հայաստանի և Արցախի հարկային մարմինների համատեղ աշխատանքով հաջողությամբ ներդրվել է կուտակային կենսաթոշակային համակարգը, որը հնարավորություն է տալիս էլեկտրոնային եղանակով իրականացնել անձնավորված հաշվառում, հաշվարկել սոցիալական վճարները և

փոխանցել դեպոզիտարիա: Ներդրվել են նաև էլեկտրոնային եղանակով հարկային հաշվարկների ներկայացման և հաշվարկային փաստաթղթերի էլեկտրոնային դուրսգրման համակարգերը: Ներկայում աշխատանքներ են իրականացվում Հայաստանում և Արցախում այդ համակարգերն ինտեգրելու ուղղությամբ:

Հանդիպման ընթացքում համաձայնություն է ձեռք բերվել մշակել և ստորագրել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի և Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի միջև համագործակցության և փոխադարձ աջակցության եռամյա ծրագիր 2021-2023 թթ. համար:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Հանդիպման արդյունքում ընդգծվեց, որ շարունակական համաձայնեցված աշխատանքը համակարգերի գործունեության արդյունավետության մակարդակի բարձրացման գրավականներից է: Այցի արդյունքները կնպաստեն Հայաստանի և Արցախի պետական եկամուտների համակարգերում նոր ծրագրերի ներդրմանը, որն իր հերթին կնպաստի ընթացիկ աշխատանքի արդյունավետության բարձրացմանը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Invalid signature

X

ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Signed by: HOVHANNISYAN EDVARD 2001830505

28.07.2020թ.